



Պաշտոնական Յայտարարութիւն

**"ՊԱՐԻՇԵՑԷՔ" ՉԵՐ ԱՆՈՒՆՈՎ,
ՈՉ ԹԷ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ" ՉԱՐԱՇԱՀՈՒՄՈՎ**

Թշնամի թիրաքիոյ իշխանութիւններուն հետ որեւէ յարաբերութիւն բնականացնելու առարք հայկական որեւէ մարմնի մը կողմէ սաստիկ մերժուած է՝ Արեւմտեան Հայաստանի պետութեան եւ ժողովուրդին կողմէ:

Նման առարքները կը հաստատեն եւ կը վաւերացնեն թիրաքիոյ իշխանութիւնը հայկական գրաւեալ հողերուն վրայ: Այն՝ ինչը հայկական ոչ մէկ կողմ իրաւունք կամ իրաւասութիւն ունի ընելու:

Եթէ հայութեան մէջ կան նման կողմեր, ըլլան անհատական կամ պետական, որոնք հաշտ են եւ կ'ընդունին 1,5 միլիոն հայ զոհերուն եւ Արեւմտեան Հայաստանի միլիոնաւոր ժողովուրդին պատկանող հայկական գրաւեալ հողերուն վրայ հաստատել եւ վաւերացնել թրքական բռնագրաւող իշխանութիւնը, ապա անոնք թող գործեն եւ յայտարարեն ուղիղ եւ յստակ կերպով ու վերցնեն այդ դիրքորոշման ազգային եւ պատմական պատասխանատուութիւններն ու հետեւանքները իրենք իրենց դիմակներով, առանց չարաշահելու "Համահայկական", "Համազգային" եւ այլ անուններ:

Բռնագրաւող թիրաքիոյ հետ առկայ մեր ազգային հիմնախնդիրներու ցուցակին մէջ երբէք չկայ, եւ պիտի չըլլայ, թէ քանի վարկեանէն կարելի է հասնիլ Երեւանէն մինչեւ գրաւեալ Վան: Արեւմտեան Հայաստանի Հայութեան համար միակ մտահոգութիւնը այն է, թէ երբ պիտի ազատագրէ Վանը ու այնտեղ հաստատէ Հայկական իշխանութիւն:

Սա բացայայտ ազգային դաւադրութիւն մըն է՝ կատարուած խումբ մը արկածախնդիրներու կողմէ, որոնք ոչ մէկ կերպ չեն ներկայացնել Արեւմտեան Հայաստանի Հայութիւնը:

Ովքեր գրաւեալ Արեւմտեան Հայաստանի բնիկ Հայութիւնը "ՍՓԻՌՔ" կ'անուանեն՝ անոնք պարզապէս կ'իրականացնեն թշնամիի քաղաքականութիւնը, եւ յստակ է որ մարմնամարզականէն շատ աւելի հեռու են իրենց սպասարկած ծրագիրները:

Ովքեր իրենց սեփական շահերը մեր ազգային գերագոյն շահերէն աւելի բարձր կը նկատեն՝ անոնք ազատ են որեւէ ձեւով արտայայտելու ազգային արժանապատուութենէն զուրկ ըլլալնին, բայց երբէք ազատ չեն իրենց դաւադրական առարքները քօլարկելու Համահայկական բառը չարաշահելով:

Արեւմտեան Հայաստանի ժողովուրդի իրաւունքներուն նկատմամբ թշնամական այս առարքով՝ անոր մասնակից բոլոր կողմերը հատեցին մեր համբերատարութեան բոլոր կարմիր գիծերը:

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ
19 Յունիս 2019